Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 5 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդու համայնքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիրը.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի «Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Զատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցում» ծրագիրը.

«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանարապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: